ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «01» 03 2021թ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան ՍՊԸ-ն (այսուհետ՝ **Պատվիրատու**), ի դեմս գործադիր տնօրեն՝ Աշոկչանդրա Նարսիմբհաի Պատելի և Երևանի Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ –ն (այսուհետ՝ **Կատարող**), ի դեմս տնօրեն Հարությունյան Արթուր Արմենի, կնքեցին վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Բժշկական բարձրագույն մասնագիտությունների գծով՝ «Ընդհանուր քիմիա , բիոօրգանական քիմիա և կենսաքիմիա, ախտաբանական անատոմիա, դատական բժշկություն» դասընթացների կազմակերպումը Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի կողմից՝ ըստ համալսարանի ներկայացրած ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի («Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով:)

Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական» կենտրոնը, համաձայն սույն պայմանագրի, հանդիսանում է արտադրական բազա «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում դասավանդվող առարկաների գործնական դասընթացները կազմակերպելու համար:

2. Ընդհանուր դրույթներ

Կողմերի փոխշահավետ համագործակցությունը ենթադրում է.

1. Պատվիրատուի՝ ուսումնական պլանով նախատեսված առարկաների գծով՝ «Ընդհանուր քիմիա, բիոօրգանական քիմիա և կենսաքիմիա, ախտաբանական անատոմիա, դատական բժշկություն» դասընթացների անցկացումը Կատարողի կողմից՝ անհրաժեշտ սարքավորումներով կահավորված լսարաններում և լաբորատորիաներում:
2. Պատվիրատուն պարտավորվում է ուսումնական դասընթացներին ներգրավվել փորձառու մասնագետների:

Սահմանել պարապունքներ անցնող ուսանողների հետևյալ թվաքանակը.
Վերոնշյալ առարկաների դասավանդման համար «Բուժական գործ» մասնագիտությամբ յուրաքանչյուր կուրսի համար տրամադրել 200-ական տեղ, «Ստոմատալոգիա » մասնագիտության համար՝ 30-ական տեղ:

3.Կողմերի պարտավորությունները

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման արժեքը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանել __840.000_(ութ հարյուր քառասուն հազար)__ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
2. Պատվիրատուն կատարում է վճարումը կատարողի կողմից, դուրս գրված հարկային հաշվի հիման վրա:

4.Կատարողի պարտավորությունները

1. Ուսանողներին ծանոթացնել կատարող կողմի կարգուկանոնին, անվտանգության տեխնիկայի կանոններին:

2. Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և Դեղագործական Քիմիայի Գիտատեխնոլոգիական կենտրոնի կողմից հմուտ և փորձառու, գիտական կոչումներ և (կամ) աստիճաններ ունեցող մասնագետներին իրավունք տալ դասավանդելու կենտրոնում, որպես համապատասխան առարկաների դասախոսներ:

3. Անհրաժեշտ պայմաններ ստեղծել ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

3.1 Ուսանողների մասնագիտական զարգացման և ուսումնական գործընթացը կազմակերպելու նպատակով հատկացնել կրթական ծրագրերով նախատեսված կաբինետներ ու լաբորատորիաներ՝ կահավորված անհրաժեշտ ուսումնամեթոդական սարքավորումներով, տեխնիկական միջոցներով, ստենդներով, գծապատկերներով, գրականությամբ:

3.2 Ուսանողներին տրամադրել դասավանդվող առարկաների ծրագրերը, գործնական և լաբորատոր պարապունքների համար նախատեսված լաբորատորիաները՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով և լուսանկարներով:

3.3 Պարապմունքների ընթացքում օգտագործել թեմայի յուրացման մեթոդական հրահանգները:

3.4 Լաբորատոր լսարանների համար մշակել և կիրառել «Լաբորատորիային» ներկայացվող պահանջները :

3.5 Լսարանային ֆոնդը հարմարեցնել առողջության սահմանափակ հնարավորություններ ունեցող ուսանողներին:

3.6 Հետևել, որ լսարաններում ուսանողների քանակը չգերազանցի թույլատրելի նորմաները:

3.7 Հսկել, թե ինչո՞վ են զբաղվում ուսանողները Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական» կենտրոնում, ի՞նչ կազմով, ո՞վ է հսկում նրանց գործունեությունը:

4. Ուսումնական գործընթացի հետ կապված բոլոր հարցերն ու փոփոխությունները համաձայնեցնել համալսարանի հետ:

5.Կողմերի իրավունքները

5.1 Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական» կենտրոնն իրավունք ունի վաղաժամկետ լուծարել պայմանագիրը, եթե «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը տարածությունն օգտագործում է պայմանագրին կամ նրա նշանակությանը ոչ համապատասխան:

5.2. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանն իրավունք ունի Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական» կենտրոնից պահանջելու, որպեսզի ուսումնական գործընթացն ընթանա պատշաճ, որակով:

5.3. Վաղաժամկետ լուծարել պայմանագիրը, եթե Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական» կենտրոնը չի կատարում սույն պայամանագրով նախատեսված պարտականությունները:

6. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու և կնքելու օրվանից և գործում է 1 տարի ժամկետով:

2. Պայմանագիրը կնքված է 2 օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ :

3. Լրացուցիչ պայմաններ առաջանալու դեպքում կնքվում է նոր պայմանագիր:

4. Պայմանագիրը կարող է լուծարվել կողմերի համաձայնությամբ;

5. Պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք

Կողմերից որևէ մեկին սնանկ ճանաչելու կամ անհաղթահարելի (ֆորսմաժորային) ուժի դեպքում

- Կողմերից որևէ մեկի լուծարվելու կամ վերակազմավորվելու դեպքում:

7.Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու	Կատարող
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան ՍՊԸ	Մնջոյանի անվան ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ք. Երևան, Մեբաստիա 3/7 ՀՎՀՀ՝ 06913609	Հասցե՝ք. Երևան, Ազատության 26 ՀՎՀՀ՝ 01008638
Բանկը ՝Հայէկոնոմ ԲԲԸ, Վանաձորի մասնաճյուղ	Բանկը ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հաշվեհամար ՝ N 163138146846	Հաշվեհամար ՝ N 900018005307
Տնօրեն՝ Ա. Ն. Պատել (ստորագրություն)	Տնօրեն՝ Ա. Ա. Հարությունյան (ստորագրություն)